ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ՝ ԸՆԴԴԵՄ «ՏՈՏԱԼԻՏԱՐ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

14.10.2013 15:22

Լոռու մարզում գործող 48 փաստաբաններ հայտարարություն են տարածել, որով քննադատում են փաստաբաններին վերաբերող և մեծ դժգոհություն առաջացրած կառավարության նախաձեռնությունը:

«Խստորեն քննադատում ենք «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի հետ կապված ՀՀ կառավարության անհեռանկար և անխոհեմ նախաձեռնությունը, գտնելով, որ այն ոտնձգում է ՀՀ-ում փաստաբանության անկախությանը և մեծ հարված է հասցնելու պետության հեղինակությանն ընդհանրապես: Լիովին համամիտ ենք ՀՀ Փաստաբանների պալատի կողմից օրենքների նախագծերի վերաբերյալ արտահայտած հիմնավոր և պատճառաբանված դիրքորոշումների հետ: Մենք օրենքով նախատեսված, ինչպես նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պայքարելու ենք, որպեսզի այդ «տոտալիտար»փոփոխությունը կյանքի չկոչվի», -նշված է Լոռու մարզի փաստաբանական համայնքի կողմից տարածված հայտարարության մեջ:

Նշենք, որ կառավարության նախաձեռնած փոփոխություններով, նախատեսվել է փաստաբանների պետական գրանցամատյանը վարելու նոր ընթացակարգ և այդ լիազորությունը վերապահվել է ՀՀ արդարադատության նախարարությանը: Բացի այդ, նախագծերով նախատեսվում է, որ ՀՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագրված փաստաբանին փաստաբանների պետական գրանցամատյանում մեկ տարի ժամկետով հաշվառելու համար նախատեսվել է գանձել տարեկան պետական տուրք' 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով: Պարզ դառնալու համար նշենք, որ ներկայումս փաստաբանների հաշվառումն իրականացնում է ՀՀ փաստաբանների պալատը և այն էլ անվճար:

Աղբյուրը՝
http://www.panorama.am/am/law/2013/10/14/announcement

Նախորդ նորությունը: ՄԻ ԽՈՒՄԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԿԻՍՈՒՄ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ. ՄԱՐՈՒՔՅԱՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ՝ ՆԱԽԱԳԻԾԸ ԱԺ ՉԻ ՀԱՄՆԻ

Հաջորդ նորությունը: ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ - ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Առաջարկվող նորություններ

24.10.2013«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՄՈԿԿ ՆԱԽԱԳԱՀ Է.ՄԱՆԵՎԻԴԻՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

16.10.2013
ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ

24.10.2013
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՑ ԽԼՈՒՄ ԵՆ 82 ՄԻԼԻՈՆ



24.10.2013ԸՆԴԵՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈՒՐՔԻ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })